# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.03.2022թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ՍՑ-ՆԳ-2022/73**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.02.2022թ. թիվ 26/26-1/2819-2022 գրությամբ «Սուր և Նիզակ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

**1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 10.02.2022թ. թիվ 1/18-2/8882-2022 գրության հիման վրա, 17.02.2022թ. թիվ 26/26-1/2819-2022 գրությամբ նախաձեռնել է «Սուր և Նիզակ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

**2. <u>«Սուր և Նիզակ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Սուր և Նիզակ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Թիվ ՍՑ-ՆԳ-2022/73» ընթացակարգով հայտնում եմ, որ հիվանդանոցում բուժման մեջ գտնվելու պատճառով 07.02.2022թ. ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղարին ուղարկված գրությունը ես չեմ ստորագրել, այլ համապատասխան գծիկով ստորագրել է ՍՊԸ-ի գնումների մասնագետ Ն. Սարգսյանը, որը այդ օրը գրությունը ստորագրելու համար իմ կողմից գրավոր լիազորագիր չի ունեցել, հետևապես ՊԵԿ-ի գնահատող հանձնաժողովը այն ընդունելու իրավունք չի ունեցել:

Առդիր ուղարկում եմ նաև անձնագրիս պատճենը, որտեղ առկա է իմ ստորագրությունը:

«Սուր և Նիզակ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/73 ընթացակարգի շրջանակներում 25.02.2022թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**3. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը</u>.**

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 10.02.2022թ. թիվ 1/18-2/8882-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պետական եկամուտների կոմիտեն իր կարիքների համար պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով 23.11.2021թ.հայտարարել է ՀՀ ՊԵԿ-ԲՄԾՁԲ-2021/3 ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցելու հայտ է ներկայացրել նաև «Սուր և Նիզակ» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովը 20.01.2022թ. թիվ 4 նիստի ընթացքում նշված ընկերությանը ճանաչել է որպես ընտրված մասնակից, որին 01.02.2022թ. ուղարկվել է պայմանագիր կնքելու առաջարկ: 07.02.2022թ. ստացվել է «Սուր և Նիզակ» ՍՊԸ-ի գրությունը առ այն, որ հրաժարվում է պայմանագիրը ստորագրելուց: ՀՀ ՊԵԿ-ԲՄԾՁԲ-2021/3 ծածկագրով գնահատող հանձնաժողովը, 08.02.2022թ. հրավիրված արտահերթ նիստի ընթացքում, զրկել է «Սուր և Նիզակ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու իրավունքից, և որպես ընտրված մասնակից է ճանաչել հաջորդող տեղ զբաղեցրած մասնակից՝ «ՊԱՀԱՊԱՆ 1» ՍՊԸ-ին:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով կարգի 45-րդ կետի պահանջները՝ Ձեզ եմ ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթերը՝ «Սուր և Նիզակ» ՍՊԸ-ին գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/73 ընթացակարգի շրջանակներում 25.02.2022թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**4. ՍՑ-ՆԳ-2022/73 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

ՍՑ-ՆԳ-2022/73 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊԵԿ-ԲՄԾՁԲ-2021/3» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սուր և Նիզակ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.01.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Սուր և Նիզակ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը armeps.am էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 01.02.2022թ. ծանուցել է Ընկերությանը՝ կից ներկայացնելով պայմանագրի նախագիծը:

4. «Սուր և Նիզակ» ՍՊԸ-ն, ՀՀ պետական եկամուտների կոմիտեին ուղղված 07.02.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՀՀ ՊԵԿ-ԲՄԾՁԲ-2021/3» ծածկագրով մրցույթի հաղթող է ճանաչվել «Սուր և Նիզակ» ՍՊԸ-ն և Ձեր կողմից 01.02.2022թ. ուղարկվել է պայմանագրի նախագիծ այն աշխատանքային 10 օրյա ժամկետում ստորագրելու և Ձեզ ներկայացնելու համար:

«Սուր և Նիզակ» ՍՊԸ-ի տնօրեն Կ. Սողոմոնյանը առողջական լուրջ խնդիրներ ունենալու պատճառով 02.02.2022թ. մինչ օրս ստացիոնար բուժում է ստանում Երևանի «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ-ի» ՓԲԸ-ում, որի պատճառով ի վիճակի չի եղել ծանոթանալու պայմանագրին և ստորագրելու այն: Նրա բացակայությունը ստեղծել է ֆորս-մաժորային իրավիճակ ՍՊԸ-ի համար, ուստի «Սուր և նիզակ» ՍՊԸ-ն հրաժարվում է «ՀՀ ՊԵԿ-ԲՄԾՁԲ-2021/3» ծածկագրով պայմանագիրը ստորագրելուց»:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.02.2022թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ընկերությունը գրությամբ հրաժարվել է պայմանագիրը ստորագրելուց և որոշում կայացրել «Սուր և Նիզակ» ՍՊԸ-ին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից:

**5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.02.2022թ. թիվ 26/26-1/2819-2022 գրությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 10.02.2022թ. թիվ 1/18-2/8882-2022 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

***բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց***,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով

սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ <u>10 աշխատանքային օրվա ընթացքում</u>, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Այսպես, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊԵԿ-ԲՄԾՁԲ-2021/3» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սուր և Նիզակ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.01.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Սուր և Նիզակ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը armeps.am էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 01.02.2022թ. ծանուցել է Ընկերությանը՝ կից ներկայացնելով պայմանագրի նախագիծը:

«Սուր և Նիզակ» ՍՊԸ-ն, ՀՀ պետական եկամուտների կոմիտեին ուղղված 07.02.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՀՀ ՊԵԿ-ԲՄԾՁԲ-2021/3» ծածկագրով մրցույթի հաղթող է ճանաչվել «Սուր և նիզակ» ՍՊԸ-ն և Ձեր կողմից 01.02.2022թ. ուղարկվել է պայմանագրի նախագիծ այն աշխատանքային 10 օրյա ժամկետում ստորագրելու և Ձեզ ներկայացնելու համար:

«Սուր և Նիզակ» ՍՊԸ-ի տնօրեն Կ. Սողոմոնյանը առողջական լուրջ խնդիրներ ունենալու պատճառով 02.02.2022թ. մինչ օրս ստացիոնար բուժում է ստանում Երևանի «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ-ի» ՓԲԸ-ում, որի պատճառով ի վիճակի չի եղել ծանոթանալու պայմանագրին և ստորագրելու այն: Նրա բացակայությունը ստեղծել է ֆորս-մաժորային իրավիճակ ՍՊԸ-ի համար, ուստի «Սուր և նիզակ» ՍՊԸ-ն հրաժարվում է «ՀՀ ՊԵԿ-ԲՄԾՁԲ-2021/3» ծածկագրով պայմանագիրը ստորագրելուց»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.02.2022թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ընկերությունը գրությամբ հրաժարվել է պայմանագիրը ստորագրելուց և որոշում կայացրել «Սուր և Նիզակ» ՍՊԸ-ին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Սուր և Նիզակ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«***Թիվ ՍՑ-ՆԳ-2022/73» ընթացակարգով հայտնում եմ, որ հիվանդանոցում բուժման մեջ գտնվելու պատճառով 07.02.2022թ. ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղարին ուղարկված գրությունը ես չեմ ստորագրել, այլ համապատասխան գծիկով ստորագրել է ՍՊԸ-ի գնումների մասնագետ Ն. Սարգսյանը, որը այդ օրը <u>գրությունը ստորագրելու համար իմ կողմից գրավոր լիազորագիր չի ունեցել</u>, հետևապես ՊԵԿ-ի գնահատող հանձնաժողովը այն ընդունելու իրավունք չի ունեցել***:

Առդիր ուղարկում եմ նաև անձնագրիս պատճենը, որտեղ առկա է իմ ստորագրությունը»:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար (...):***

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ***<u>իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:</u>***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ պարտավորական իրավահարաբերություններն այն հասարակական հարաբերություններն են, որոնք կապված են որոշակի գործողություններ կատարելու կամ դրանց կատարումից ձեռնպահ մնալու հետ:

Պարտավորական հարաբերությունների առաջացման հիմք են հանդիսանում նաև միակողմ գործարքները, որոնց միջոցով քաղաքացիական իրավունքի սուբյեկտը միակողմանի կամահայտնությամբ տնօրինում է իր սուբյեկտիվ իրավունքը կամ ստանձնում է սուբյեկտիվ պարտականություն՝ դրանով իսկ պարտավորական հարաբերության մյուս կողմին օժտելով համապատասխան սուբյեկտիվ իրավունքով:

***Պարտավորական իրավահարաբերությունների ծագման հիմք է հանդիսանում նաև լիազորագիրը, քանի որ այն միակողմ գործարք է, որը <u>իրավաբանական անձի անունից տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ ներկայացուցչին և պարտավորեցնում է գործել դրանում սահմանված լիազորությունների շրջանակում:</u>***

Այսպիսով՝ վերոգրյալ իրավական նորմերի մեկնաբանման և սույն գործի փաստերի համաձայն՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով Ընկերության 07.02.2022թ. գրությունը՝ պայմանագիր կնքելուց հրաժարվելու վերաբերյալ, 08.02.2022թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն որոշում է կայացրել գրության հիման վրա «Սուր և Նիզակ» ՍՊԸ-ին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից, մինչդեռ ուսումնասիրելով վկայակոչված գրությունը՝ արձանագրում եմ, որ այն չի ստորագրվել տնօրենի կողմից, հետևաբար այլ անձի կողմից ստորագրված լինելու պայմաններում վերջինս պետք է ունենար այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ՝ լիազորագիր, որը իրավաբանական անձի անունից տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ և պարտավորեցնում է գործել դրանում սահմանված լիազորությունների շրջանակում, որը Պատվիրատուի կողմից ներկայացված հիմքերում առկա չէ:

Վերը նշված փաստով պայմանավորված՝ գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Ընկերության տնօրենի կողմից չստորագրված գրությունը և 08.02.2022թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշման համաձայն զրկելով Ընկերությանը պայմանագիրը ստորագրելու իրավունքից, ընդ որում՝

պայմանագրի ստորագրման համար օրենքով նախատեսված 10 աշխատանքային օրը լրացած չլինելու պայմաններում, գործել է ոչ իրավաչափ:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Սուր և Նիզակ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.02.2022թ. թիվ 26/26-1/2819-2022 գրությամբ «Սուր և Նիզակ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**